

2.

Ձեռ. Էջմ. N 1124 | 2838.

Ղուկասի վերջում, գրչի յետում:

Զգրիգոր գրիչ անարժան ծառայս անյ յիշեսջիք աղաչեմ:

Յովհաննու վերջում:

Փառք ամենայտուրբ երրորդութեանն հաւր եւ որդւոյ եւ հոգւոյն սրբոյ այժմ եւ յաւիտեանս յաւիտենից ամէն:

Ի թւականութեանս հայւոց ՁԽԶ⁽¹⁾ ի թագաւորութեանն բարեպաշտ եւ անձաւթ թագաւորին հայւոց Հեթմոյ՝ մեծի եւ յազթողի: Եւ ի կաթողիկոսութե՛ն հայւոց ան Կրիգորի: Եւ յաշխարհակալութե՛ն Ղազան զանին: Եւ ի մերոյս նահանկի տերութեանն Խոշաքին եւ Զաքարիայի որդոյ նորին եւ ի տերութեան մերոյ սուրբ ուխտիս Հայոց Թառայ պարոն Բիսուլթային եւ Խոյանձային . . .⁽²⁾ ի դառն եւ յանբարի ժամանակի աւարտեցաւ սուրբ աւետարանս ձեռամբ Կրիգորոյ նուաստ եւ փցուն գրչի, յոգնամեղ եւ փանաքի եղբաւր. ի սք եւ ի հուշակաւոր եւ յանձարնակ ուխտիս, Հայւոց Թառայ որջորջելոյ՝ ընդ հովանեաւ կաթողիկէ եւ կեղեցոյ սք Սիոնի եւ անձրնկալ սք Ամենափրկիչիս ի ձեռն սորա բազ(ու)մ սքանչելիք եւ պէս պէս բժշկու(թիւ)նք կատարին:

Արդ աղաչեմ զամենեանս որք աւգտիք ի սմանէ, ընդաւրինակելով եւ կամ ընթերցմամբ վայելելով, յիշեսջիք առաջի զենւոյն վասն մեր ամենամաքուր գառինն քի զստացող պատգամացս ան զՔուրդն եւ զամուսին իւր զԱսլերն եւ զձնօլս նոցայ զՄեհեաւն եւ զՏաֆսիկին եւ զայլսն ամեւնայն⁽³⁾, որ ստացան զսա իւր յիշատակ եւ ծ(նո)ղաց իւրոց, որպէս զի յոյսն մեր քն շն(որ)հեսցէ թողութի՛ն յանցանաց նոցա:

Վասն որոյ ես մեղաւոր Կրիգոր գրիչ աղաչեմ յիշել ի քն եւ զիս եւ զճնաւդսն իմ: զԱբրահամ ուսուցիչն իմ եւ զՄիսիթարիչ հայր իմ. եւ զՄամթաթուն մայր

(1) Վերջին երկու տառերը՝ ԽԶ փճացած, Խ-ի երկար գիծն է երևում եւ Զ-ի պոչը:
(2) Բաց մի տողի չափ:
(3) Ընդգծուածը տարրեր թանաքով, բայց անկասկած նոյն Կրիգոր գրչի ձեռքով գրուած: Փակագծի մէջ առնուածները փճացած են, մենք ենք լրացնում:

իմ եւ զեղբարս, զի բազում աշխատանաւք եւ ահիւ գրեցի զսա. եւ արարէք ողորմութի՛ն առ իմս աղքատու(թ)իւն եւ հայցեմք ի քե՛ն ով դասք լուսերամից մեղուցելոյս թողութի գտանել յաւուրն մեծի եւ իմոց ծնողացն որք ըստ մարմնոյ եւ ըստ հոգւոյ եւ ան որ առ(ատ) է ի պարգեւս ձիրս եւ անթերի եւ անկարաւտ յամենայնի, տացէ մասն բարի ամենեցուն յանբաւ եւ յանչափ մեծութե՛ն զանձուց ողորմութեանն իւրոյ, յիշողացդ եւ յիշեցելոցս. եւ ինքն եղիցի աւրհնեալ յաւիտեանս յաւիտենից ամէն ամէն:

Ի վերայ ամենայնի փոխատուն բարեա(ց յ)ն տացէ վարձս բարեաց դեռաբոյս քահանայի եւ մեր սիրելի հոգեւոր եղբաւր Միսիթարայ, որ աւգնական եղեւ ի գործ սք աւետարտնիս:

3.

Գանձակի Երչանի Բանանց գիւղի «Պապ» կամ «Ծեր» աւետարան.

Աճ ողորմի կազմողի սորայ Գերգայ եւ իւր ծնողաց ամեն: Թվականութի՛ս հայոց ՁԽԳ: զպատական (s!) քահանէ զԱմենաւագ որ հալալ վաստակոց իւրոց ըստացաւ սայ յիշատակ իւր եւ ծնողաց որք կարգէք (s!) սասացէք ան ողորմայ իւր եւ ծնողի իւրոց ամեն:

Յովհաննու վերջում՝ Կոստան նորոգումս երկու Բերբէն. նորոգումս եւ յիշարարանի գէրբ նոյն:

Ես անարժան եւ մեղու(ց)եալ սուտանուն կոչեցեալ Ամենաւագ հա(լ)ալ արդեանց իմոց գնե(ց)ի զսք գաւետարանս ի գաւա(ու)էն Գառնու ի վանացն Հաւու Թառու ի բարեխաւսութի ինձ եւ ծնողաց հաւր իմոց Խասիլայ⁽¹⁾ եւ մաւր իմուչ-(Կո րո)այ⁽²⁾ եւ ամուսնու իմ . . . (Եւ ?)այի⁽³⁾ արդ աղաչեմ զա(մ)էն վասն սիրոյն քի որ (կա ?)րգէք յաղաւթս իշե:

(1) Ընդգծուածը կասկածելի. պէտք է կարդալ «իմ Մուխարայ», մ-ը չի կրկնել գրիչն այդ դէպքում, որ պատահում է յաճախ, մասնաւոր արձանագրութիւնների մէջ. կամ «իմու թարխայ»:
(2) Գիծը նշան է. թէ մի տառ պակաս է. պէտք է կարդալ «իմ Մուշու(շ?)այ», բայց աւելի հուանական է «իմու Շաշայ»:
(3) Փակագծինը մենք ենք աւելացրել, փճացած է երկու բառի տեղ: